



ԱՐԾՈՒՄ ՎԱՍԳՈՒՐԱԿԱՆ

ԹԻՌԻՅԵԱԼ ՀԱՅՐԵՆԱԹԻՐ ԹԵՒՕՐ
ՅԵՐԺՈՒՆԻ ՄԵՆԱՍՏԱՆԷՆ ՎԱՐԴԱՅ

ԽՐԲԱԳԻՐ ՀԱՅՐԵՆԱԹՍ
ՄԿՐՅԻՉ ՎԱՐԴԱՅԵՍ ԽՐԴԵԱՆ

1884 թ. 4.

ՀԱՅՐԵ ԶՈՐՈՐԻ
ՎԱՐԴԱՅ

ԻՅԺ

ԻՅՂԱՐԱՆԻ ԶՈՐՈՐԻՎԱՆ ԱՐԾՈՒՄ
Ի ՎԱՐԴԱՅ



THE
LIBRARY
OF THE
MUSEUM OF
NATURAL HISTORY
OF THE
CITY OF
NEW YORK
AND
THE
ADJACENT
ISLANDS
OF
STATEN ISLAND
AND
ROCKAWAY



ԵՐԾՈՒՒ

ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ

ՃԱՏՈՐ Դ .

1861

ԹԻՒ 4

ԱԶԳԱՅԻՆ ԵՐԿՊԱՌԱԿՈՒԹԻՒՆ

„Ո՛ր սպրդեալ անկանի երկառախո-
թեան, ընդ խալել մաքանոթեանն ե-
րկնաւոր առաքինոթեանն հեռանայ, .

ԵՂԻՇԿ

ՎԱՐԴԱՆԱՆՑ սուրբ գնդին նկարագիր եղիշէ
սուրբ վարդապետն, մինչդեռ արտասուակաթ աչքով կ զի-
ռէր Աւարայրի դաշտին մէջ խմբուած Հայոց արիական

գունդը մինչդեռ կտեսնար, որ երկպառակութեան հոգին
 օձի նման սողալով մտաւ այն երկնաւոր առաքինութեամբ
 զինուորած հայրենատունէկ դրախտին մէջը. սուր տապարի մի
 նման կտրեց բաժանեց միութեան արմատէն Վասակեան
 աստուածութեաց և հայրենադրութ ձիւղը. ուստի արտասուա-
 լից ողբով ճառագրեց այդ վերջիշեալ խօսքը. « Եթէ ուր
 սպրդեալ մտանէ երկպառակութիւն անդէն եւ երկնաւոր
 առաքինութիւնն հեռանայ » :

Ճշմարիտ կ'իստի սուրբ վարդապետը եւ համարեա թէ
 նոյն իսկ Պօղոսեան հոգւով : Լուսոյն՝ խաւարին հետը կամ
 Քրիստոսին՝ բելխարին հետը ինչ միաբանութիւն կայ :
 Սոյնպէս երկնաւոր առաքինութիւն, որով կ'իմանամք սուրբ
 սէր, եւ միաբանական հոգին, որ հաղորդութիւն չունին
 երկպառակութեան հետը. որով իսկ կ'իմանամք բանաստեղծ
 աստուանայ, խորամանկութիւննախանձ, ատելութիւն, կազեւ
 կռիւ. անհաշտ խռովութիւնը, ռիւքրիմ թշնամութիւն
 բաժանումն եւ վերջապէս աւերումն եւ կործանումն :

Երկպառակութեան թիւնաւոր օձը իսկզբանէ անտի
 միշտ սողաց ու մտաւ Հայաստանի դրախտին մէջը, միշտ
 քակեց ու բաժանեց Հայկազանց անխզելի միութիւնը,
 համարիւն սիրելեաց եւ բարեկամսց զուգութիւն, մէկ
 հօրէ եւ մէկ նահապետէ յառաջ եկած հայրենի տան
 զուակները օտար աշխարհներու մէջ ցրեցան վարեց :
 Այս դժնդակ օձը ինչ աղէտներ չբերաւ Հայոց աշխար-
 հին գլուխ :

Հայրենեաց տնաւեր աղէտներէն ո՞ր մէկ խօսիմ կամ
 թուեմ բեզի համար, ազնիւ ընթերցող, որպէս զի հաս-
 կընաս թէ այսամէն աղէտներուն պատճառը նոյն երկպառա-
 կութեան օձն էր, որ կ'սողար Հայոց աշխարհի ամէն տե-

դերը : Առաւելապէս իւր բոյն փորներ էր թագաւորաց պալատներուն տակ, մեծամեծ նախարարաց տուններուն մէջը, պատերազմական դաշտերուն մէջը, նա մինչեւ անպամ եկեղեցւոյ դրախտին մէջ մտաւ եւ շատերուն գարշապար խայթելով մահացոյց եւ վերջապէս բաժնեց ու հանեց եկեղեցւոյ միութեանէն : Գլխին արդեօք, երկպառակութեան հոգին սրչափ օձինման դաժան արքանեակներ գտաւ չայոց աշխարհին մէջ, մտաւ նոցա սիրտը զրդեց ու դըրփուեց, հայրենեաց վեհ բարերարները տիրադրուած ձեռքով մահացոյց : Սխալեան ամբարիշտ նախարարներուն ոտքով մտաւ Արշակունեան տունը, իբրեւ անխարդախ բարեկամ բազմեցաւ թագաւորական սեղանին վերայ . կշտապինդ կերաւ Տրդատայ քրտանց հացը, բայց յաջախեց իւր խաբէութիւն . ձի հեծաւ որսի ելաւ ընկերաբար, նետահար խոցեց սեգ հսկային սիրտը, չմեռաւ մինչեւ նոյն տիրոսպան ձեռքը մահճին մէջ խմցուց այն թիւնալից բաժակը : Երկու սեպհական բոյներ փորեց իւր համար, այս դժնիկ եւ իժ օձը, Արշակունեան տան մէջ եւ ապստամբ նախարարաց գղեակներուն մէջը, միշտ փոփոխակի մէկ տեղէն միւս տեղը կսողար եւ կ'թիւնաւորէր միութեան կենդանի սիրտերը : Սրեց ապերախտութեան սուրը, տուաւ ժանտ դահլիճ Պապ թագաւորին ձեռքը, որպէս զի իւր ձեռքով հատանէ բարերար չայրապետին բազուկը, որ իւր գլուխը պսակեց միապետ իշխանական թագով, եւ այսպիսով հայրապետական գաւազանին միութեան եւ օրհնութեան ճիւղը ձեռքեց ու բաժանեց թագաւորական գաւազանին ճիւղէն չիմացաւ անմիտն թէ իւր գաւազան միշտ կանանչ ու դալարի պահօղ Ներսիսի սուրբ օրհնութեան ճիւղն էր . զոր խստափրտ երկպառակութեամբ որոշեց իրմէն եւ

ինքն ալ իւր փշաքեր գաւազանով մէկ տեղ վաղվաղակէ
 չորացաւ : Նոյն միջոցները Արշակունեան անէն դուրս
 կ'վազէ այս գաղտաշրջիկ երկպառակութեան օձը եւ կ'մտնէ
 Բադ Սահառունոյն տունը չարախօսութեան յետանով կտրէ
 սաստիկ նորա լեզուն Վարազդատին առաջք : Մամիկոնեան
 քաջակորով Մուշեղին արիւն թափել կուտայ խարդ սխ ու
 մահառիթ խնջոյից սեղանին վերայ : այն արիւնը, որ նուի-
 րական էր հայրենեաց համար, այն անձն, որ պարծանաց
 նշաններով այսինքն թշնամեաց ու վիրաց սպիներով սպի-
 տակափայլ ծաղկած էր :

Թագաւորութիւն բաժանեալ յանձն իւր՝ աւերի ,
 Քրիստոսի խօսքն է, մարդոյ չէ : այս Աստուածալծիւ աւեր
 խօսքը երկու Արշակունի Թագաւորաց այսինքն խորովին
 ու Արշակայ ականջներուն չազդեց բնաւ : Աստուծոյ սուրբ
 պատգամին դէմը խցին ու երկպառակութեան օձին դէմ
 քային իրենց խուլ ականջները : խորհրդակորոյս յիմար նա-
 խարարները կուսակցութեան հոգւով իւրաքանչիւր մէկ
 մէկ կողմը բռնեցին չիմանալով հայրենեաց ապագայ վտանգ :
 երկու ազգակից համարիւն Թագաւորները զէնք առին իրա-
 րու դէմ ու կռուեցան չարաչար : Հայ Հայու արիւն հայ-
 րենեաց մէջը թափեց, ռիսերիմ թշնամիները Յոյն ու Պար-
 սիկը ծափ զարկին, վաշ վաշ կտրեացին ու խաղալով Հայաս-
 տան մտան : Նոցա ուզածն ալ այս էր, որպէս զի Հայերը
 իրարու հետ կռուին, զիրար մատնեն : Թշնամիք առանց աշ-
 խատութեան առանց պատերազմական ճակատ մղելու :
 ցած ու անպարծանք յաղթանակով հայրենեաց անպահա-
 պան ու բաց մնացած դռնէն ներս մտնեն ու տիրեն :
 Այս մտան ու տիրեցին, Արուսադէմի աւերիչ թշնամիներ
 րուն պէս իրարու ձայն տալով կ'սօսէին : քակեցէք, բա-

կեցէք մինչեւ ի հիմն հասուցէք բարձրացեալ Հայաստանի շէնքը : Երկպառակութեան օձը վերջին Արտաշիր Թագաւորին օրով՝ այնչափ փորեց ու մտաւ Արշակունեաց պալատին տակը մինչեւ հիմն հասոյց ու խապառ քանդեց այն անմիտ նախարարներուն ձեռքով : որոնք իմաստուն Հայրապետին մարգարէախօս խրատներուն միտ չդնելով՝ Արշակունի Թագաւորաց տան վեց հարիւր տարուան շէնքը իսկ իրենց ձեռքով քակեցին : ուշակօրոյս յիմարները, խելացնութեամբ կարծեցին թէ իրենց տուն շէն պիտի մնայ , վասն զի ինչպէս կ'կարգանք եւ կ'իմանամք խորեհնացոյ պատմութենէն . գիտես թէ Աստուած վրէժխնդիրը վերջին յիմարութեան հոգի մի տալով իրենց, համազգի եւ ընտանի նախարարները սուր քաջելով միմեանց դէմը այն պատուական եւ պայազատ սերունդները իւրեանց ձեռքով քնջեցին :

Այսպէս . երկպառակութեան սուրը վերջին հարուած տուաւ Արշակունեան տան, հողաբլուր դարձուց Արտաշատ, Վաղարշապատ եւ այլ Թագաւորանիստ բաղաքները, քակեց նա եւ այնչափ հզօր եւ մեծածոխ նախարարաց տունները . վերջապէս երկնաւոր առաքինութեան կամ միութեան հոգին խապառ հալածելէն յետոյ ելաւ սողունելով մտաւ Բագրատունեան նորատունկ գրախօին մէջը . ինչ մահառիթ դառնահամ երկպառակութեան պտուղները չիկերցուց նոյն ժամանակուան մնացորդ Հայոց իշխաններուն : որուն ցաւալի պատմութեան ողբալից նկարագիր Յովհաննէս Սաթուղիկոսն է : Մտադիւրութեամբ կարդա , ուշիմ ընթերցող, կ'հասկնաս որ այնքան սուկալի հայրենաւեր աղէտներուն պատճառը միմեայն տիրող երկպառակութիւնն էր : Այն դժնիկ օձը չէ՞ր արդեօք . որ

Արծրունի Գագիկ իշխանին ականջներուն փչեց, թէ որ
 Սմբատ թագաւորէն բաժնուիս, անտարակոյս Վասպուրա-
 կան աշխարհին Աստուած կամ թագաւոր կ'լինիս: Փառա-
 սէր ողորմելին գլուխ քաշեց ապստամբեցաւ. ինքնիշխան
 ընտրութեամբ ելաւ բարձրացաւ նստաւ Վասպուրականի
 գահ. մինչդեռ անօգնական մնացած ողորմելին Սմբատ թա-
 գաւորը Հազարացւոյն չուանով մահուան փայտին վերայ
 կախուած, օգնական օգնական կանչեց ու մեռաւ: Նոյն
 երկպառակութեան օձ չէր. որ Անույ դրսիստին մէջ բու-
 սած Բագրատունեան նորածիլ գաւազանին փոքրիկ ու բա-
 րակ ձիւղը շատ անգամ երկուք ճեղքելով բաժնեց. նորա
 մէկ կտորը տարաւ Սարս քաղաքին մէջ տնկեց. մէկ տունին
 մէջ երկու թագաւորը, թզաչափ սահմանի մի մէջ երկու
 հակառակ իշխանութիւնը: Այսպէս իր անձին գէմը բա-
 ժանուեցաւ ու կործանեցաւ Բագրատունեան գահը. թէպէտ
 հայրենեաց վերջին յոյս աղատաաէր Գագիկը
 արիական արիւնը եռացոյց իւր սրտին երակները, ուղեց
 վերստին այս ճեղքուած գաւազանին ձիւղը քաջա-
 ձեռն յաջողակութեամբ պատուաստել միութեան արմա-
 տին վերայ. սակայն ելաւ չարածնունդ վեստ Սարգիս մի
 փաղտագողի նենդութեամբ ձեռքն առաւ երկպառակու-
 թեան սուրբ. որով իբրեւ սատանին զէնքը՝ մինչդեռ կ'պառ-
 ուաստէր Գագիկ միութեամբ, նա կ'կտրէր երկպառակու-
 թեամբ: Յաղթալարեց վերջապէս տիրադրաւ իշխանին
 ձեռքը մինչեւ նոյն հարազատ միակ ձիւղն ալ իւր արմա-
 տէն բաժնելով ձգեց Յունաստանին մէջը: Այսպէս,
 Անույ թագաւորութեան դուռը փակեց ու բանալին օտար
 իշխանութեան ձեռք յանձնեց: Բուն Հայաստանին ան-
 իշխանութեան ժամանակ նոյն երկպառակութեան օձը թէ

որչափ աղէտներ բերաւ հայրենեաց գլուխը պատմութիւնը
 է յիշէ մեզ, Անույ աւերակներ վկայութիւն կուտան, վասն
 զի թագաւորութեան հաստարմատ գաւազան մինչդեռ երկ-
 պառակութեան տապարին սատիկ հարուածէն գետին փու-
 ուեցաւ, ինչ է յուսաս խոհական ընթերցող, այն վերայի
 մեծամեծ ձիւղեր ողջ է մնան. որ նոյն արմատին վերայ միայն
 հաստատութիւն ունին. քաւ, ոչ երբեք : Հայաստանեայց
 թագաւորութեան գաւազանը Նաբուգոդոնոսորին տեսած
 պաշտպանութեան հովանիք տարածող ահագին ծառն էր.
 Աստուծոյ հրամանին հրեշտակը չի կտրեց զայն, այլ միայն
 երկպառակութեան դեւը. անկաւ այս ծառն եւ վերայի մե-
 ծամեծ ու մանրիկ ձիւղերն առ հասարակ բոլորն ի միտին
 փշրեցան գետնին երեսը. Պարսիկ, Յոյն ու Հագարացիին
 երկաթեայ կոշիկներով կոխկռտեցին մինչեւ հողին հաւասար
 գարծուցին : Խեղճորոյս, անքաղաքակիրթ իշխանք Հայոց
 դաւաճանութեան տապարը սրեցին ու ամէն կողմանէ յար-
 ձակեցան հայրենի թագաւորութեան ծառին վերայ, որուն
 արմատին զօրութենէն էր իրենց աճումը կամ իշխանական
 ճոխութիւնը. կտրեցին այո՛, եւ կարծեցին յիմարութեամբ
 թէ իրենք միայն կարող են կանաչ մնալ կամ ապրիլ ազատ
 փառաւորութեամբ. բայց վաղվադակի ցամաքեցան ու չորա-
 ցան նոյն ինկած արմատին վերայ. վասնզի երկպառակութեան
 օձին փչած թիւնաբեր խորշակը հայրենեաց իշխանութեան
 կանաչ ծառերը չորացուց եւ միանգամայն խոտի խալի ի նը-
 ման փչեց տարաւ. աշխարհիս չորս կողմը :

Երկնաւոր առաքինութեան կամ միութեան հոգին այս-
 չափ չարիքը ու հալածանք կրելով երկպառակութեան
 ձեռքէն յուսահատեցաւ եւ մտածեց որ Հայաստանին մէջ
 իւր գլուխ դնելու դադար չի մնաց. Յակոբ Նահապետի

Նման միայն հայրենեաց երկրէն ցուպ մի ձեռքն առնելով
 փախաւ գնաց մինչեւ Արիկիայ երկիրը . ուր իրեւ թէ հան-
 դիստ տեղ մի գտնելով՝ Տորոսեան լեռանց անտառներուն մէջ
 տնկեց իւր ձեռքին փաւազանը : Քիչ ժամանակի մէջ աճե-
 ցաւ ու բարձրացաւ Ռուբենեան իշխանութեան ծառը .
 որուն քաղցր հովանիքը բաւական դիւրութիւն հոտար-
 դաղթական Հայոց եւ նոր մխիթարութեան յոյս կընծայ-
 էր փլած հայրենեաց վերանորոգութեան : Մինչդեռ Հայ-
 աստանը երկպառակութեան օձին համար անջրդի անա-
 պատ մի դարձեր էր կշրջէր, յաճախ եւ հանգիստ կ'ենդրէր
 յիրաւի՝ իւր համար ալ հանգիստ չէր մնացեր . վասն զի բը-
 նաւ տեղ չի մնաց Հայաստանին մէջ որ իւր թոյն չի թա-
 փէր . ելլաւ ցամաքէն ու ծովէն սուլալով աղալով հասաւ
 մինչեւ Արիկիայ . մերթ կ'մտնէր Ռուբենեան պալատը եւ
 յաճախ կշրջէր անհամամիտ օտարասէր իշխանաց տունը
 գրգռեց, թելադրեց, եւ այս վերջին գաւազանին վերջին հա-
 րուած մի տալով այնպիսի ուժգնութեամբ մի զարկաւ մին-
 չեւ ձգեց վեցերորդ դժբախտ Լեւոն Եւրպայի սահմանին
 մէջ : Ոչ այնչափ կարծեմ ընտանի երկպառակութեամբ քան
 թէ բարեկամ կարծուած օտար իշխանութեանց սուտ յոյսե-
 լով վերջացաւ այս իշխանութիւնը, ինչպէս իւր պատմուն-
 պարագաներէն հետաքրքիր ընթերցող կարող է նշմարել :

Չորս հարիւր տարուան շրջանին մօտ կ'հասնէ ահա Հայ-
 կազանց անիշխանութեան ժամանակը . քաղաքական եւ ազ-
 գային ամէն կերպ յառաջադիմութեան երջանկութենէն
 զրկուած : Չորս անգամ Աստուծոյ այցելութեամբ յարու-
 թիւն առած ու կանգնած Հայոց իշխանութիւնը վերջա-
 պէս մեռցուց ու անտակ եւ խոր քերեզման մի փորեց
 իրեն համար երկպառակութեան ձեռքը . եւ այս ներկայ

ազգաստութեան, օտրկութեան. տարաշխարհիկ օտարութեան
եւ ամէն կերպ թշուառութեան ծանրագոյն վէճ մի գը-
լորից սոյն գերեզմանին վերայ. զոր ի բաց տանել կամ կեն-
դանաստու ձայնով վերստին ի կեանս կոչել բարեկամ Ղազա-
րոսի պէս Յիսուսի պցելութեան ոտք պէտք է միայն :

Այս էր ահա երկպառակութեան ծառին պտուղը, զոր
մեր Հայաստանը կանաչի յիմարութեամբ կերաւ ու մեր-
կացաւ իւր նախնի Աբաղաժատուր փառքերէն . երկնից
ցասման սուրբ բռնաւորաց ձեռքով զինքն հայրենեաց
դրախտէն դուրս հանեց, Հայաստանի բազմաթիւ զաւակ-
ներէն խիստ քիչ մասն մնաց, որք իբրու թէ այս դրախտին
յանդիման կ'ընակին. իսկ մնացածը աշխարհիս ամէն հեռա-
ւոր եզերքներ չուեցին ու գնացին ռզորմելի գաղթականու-
թեամբ : Բայց մի թէ Հայաստանի դրախտէն արմատահան
եղած Հայկազանց ազնիւ բողբոջները օտար հողերու վերայ
տնկուելով ազգային կանաչութիւն պահեցին. քան, կամ
օտար արեւին տակը տապանալով չորացան. կամ անհարա-
զաւ ձիւղերու վերայ պատուաստելով՝ իւրեանց բնիկ
ազնուութեան համն ու հոտ կորսնցուցին : Չար մշակ
երկպառակութիւն, այդպէս Հայաստանի մեծամեծ մայրերը
կամ իշխանութեամբ բարձրացած անասունները արմատէն
մօտակառուր բրաւ : Դեռ չի գաղափիր, դեռ կաշխատի
անդադար, որպէս զի հողին խոր տեղերը պահուած կամ
մնացած արմատին բարակ ճիւղերն ալ քակէ եւ դուրս
հանելով կրակին տայ : Գո՞ղ եւ աւագակ երկպառակութիւն.
հազար տարիէն աւելի է, որ մտեր է Հայոց տուն, մեր
բոլոր ազնիւ ազնիւ օտարացուածներ կողոպտեց, հզօր տանու-
տէրները սարկութեան չուանով կապեց ու վարեց դէպ
ի գերութիւնը. բայց դեռ Հայաստանի տունէն դուրս

չէին, մութ անկիւններուն մէջ մտած խառնակիչ ձեռքով
 շօշափելով կորոնէ, որպէս զի մնացած կամ պահուած քանի
 մի թանկագին ստացուածներն ալ խառն կողովտէ :
 Ազգային պատմութեան հանգամանքները լաւը քննելէն
 յետոյ, ինչ կ'արժես, մտայնի ընթերցող, հայրենեաց նախնի
 շինութիւններ աւերակ դարձնող Վէնկթիմուրին կամ նորա
 նման բարբարոսաց արշաւանքն էր, ոչ, այլ միայն երկպա-
 ոսկութեան հոգին, որ ընտանի միոյ մօր զաւակները
 իրարու դէմը սուր քաշելու գրգռեց. ինչպէս Վասակները՝
 Վարդանին դէմը, Մեհրուժանները՝ Մուշեղին կամ Սմբա-
 տայ դէմը :

Խօսքիս ոճը դէպ ի բեզ դարձնելով՝ ողբալի Հայաս-
 տան, այսքան չարեաց աղէտները երկպառակութեան դա-
 ժան երեսէն կրելէդ յետոյ, քու հսկայական մարմինը
 Յակովկայ բազմահատ վկային պէս կտոր կտոր դարձոյց
 երկպառակութեան սուրը, դեռ ապաժոյժ մարմնայդ արիւն-
 լուայ անդամները գետնին վերայ ինկած իրարու հետ
 կ'կռուին : Մինչեւ յէրբ, արդեօք մինչեւ վերջին շունչդ
 որուն գրեթէ միայն ապաստան եղած կ'հեծես բազմաժա-
 մանակեայ մահճիդ մէջը : Ո՛հ միթէ երկինքը իսկզբանէ
 անտի քու ճակատագիրը միշտ կռիւէ սահմաներ, միշտ
 խռովութիւն. միշտ նախանձ, միշտ ատելութիւն, միշտ
 մատնութիւն, հետեւանքն ինչ է ասոր, գիտնա, ազգութեան
 մահ եւ տարածամ մեռելութիւն : Մինչդեռ բեզմէ հեռ-
 ացած գաղթական զաւակներուդ ընտիր մասն. այսինքն
 Բիւզանդացի Հայկազունքը. փոքր ինչ լուսաւորութեան
 ճրագը ձեռքերնին սռնելով՝ այն ինչ կուզէին քու ընդար-
 ձակ տան մթնցած խորշեր լուսաւորելու. որպէս զի գող
 երկպառակութեան հոգին ամէնայ ներս մտնելու : Բայց

դաւ երբեմն այնչափ կ'յիմարանաս, որ թիւր աչքի դատողութեամբ զբեզ սիրող հարազատ զառականերուդ այսօրինակ այցելութեան բարերարութիւնը մերժելով եւ զիրենք իբրեւ գող եւ աւաղակ համարելով հրապարակներու մէջ կաղաղակես : Ասկածու ու ցարմկոտ հիւանդի նման բազում աշխատութեամբ քեզի համար պատրաստուած զօրաւոր դեղերը բերանդ առնելու կ'զգուիս. երկպառակութեան մահադէմ հրեշտակը մահձիդ մօտ կեցած միշտ կ'թելադրէ զբեզ, իբրու թէ այդ դառնահամ դեղերը քու տկար ստամոքսիդ փասակար են : Զգուշացիր խելքդ քեզի բեր, կ'խառէ զբեզ այդ մահաէր հրեշտակը. որպէս զի դու անդարման եւ անյոյս սպրեւով այդօրինակ տկարութեան մէջ օրրսօրէ մահուան դուռը հասնելով հողիդ աւանդես : Աշխարհի փրկութիւնդ դատաստանը կարծեմ թէ այս արձանագրութիւն պիտի յօրինէ քու տապանիդ վերայ « Համօրէն ազգերու նահապետ ծերունի Հայաստան չորս հազար տարիէն աւելի ապրելէն յետոյ, այնչափ բարբարոսաց սուրբ չի կարողացաւ զիւր ազգութիւն իսպառ ջնջել. վերջապէս միայն ընտանի խումբութեան մէջ երկպառակութեան հոգին զինքն մեռցուց » : Ողբացէք, որդիք Հայոց, ապագայ կենդանի ազգերը այս վերտառութիւն պիտի կարդան մեռած Հայաստանին գերեզմանին վերայ : Ո՛հ, որուն յիշատակ քանի՞ դառն ու անարգանքէ Հայկազանց աշխարհահռչակ անուանէ. Բու դրօշի աշխարհակալ Ասորին մեռաւ իւր բազմաթիւ ժողովրդով, այս բեզ բաւական խրատ չէ՞. ուրիշի գլուխ եկած ազգութիւն ջրն ջող պատճառները քննելով խորագիտութեամբ զգուշացիր եւ ամէն կարելի միջոցները գործի դիր. որպէս զի միշտ ողջ տղքիս կենդանի ազգաց պէս ու բազմադար ժամանակ


բաւ քու պարծանաց յիշատակը յաւերժական լինի :

Բաւական եւ հերիք է , Հայաստան , ընտանի կռիւներու մէջ կ'տեսնաս թէ զաւակներդ ի՞նչպէս կ'չարչարունին , հաշտութիւն խօսիր երկնաւոր առաքինութեան հետք . որ գիտես թէ խռոված քեզմէ երես դարձուցերէ . խաւարասեր երկպառակութեան հոգին սրտիդ թօթարանէն դուրս հան եւ արժանաւոր տեղիք պատրաստէ երկնաւոր առաքինութեան . մի կարծեր թէ այս երկու ներհակական զօրութիւնները մի եւ նոյն տեղ բնակելու կ'հաւանին երբեք : Յիշէ այս տեղը առաքելոյն խօսքը , լոյս խաւարին հետ կամ Յիսուս բեղիարին հետը միաբանութիւն չունի :

Արկնաւոր առաքինութիւնը ողբեղու համար խաղաղարար պատգամաւորներ պէտք են . այս պատգամաւորութիւնը աստիճանի պնձանց կ'պատկանի : Թէպէտ եւ Աւետարանի երանին ամեն լսողներուն կ'վերաբերի խռովութեամբ վրդոված մարդկային ընկերութեան մէջ խաղաղարար լինել . բայց կարծեմ այս պարտաւորութեան բեռը եկեղեցւոյ պաշտօնէից եւ պաշտօնական իշխանաց ուսերու վերայ կ'ծանրանայ . որոնցմէ մէկ դասն իբրեւ Ահարօն Աւետարանին հեզութեան բուրվառ ձեռքն առած թող շրջի թողովրդեան մէջ հաշտութեան եւ խաղաղասիրութեան անուշահոտ խունկերը ծխէ . իսկ միւս դասն իբրեւ միջնորդ Մովսէս երկու համազգի իրար զրկող եղբարց մէջ թող մըտնայ դատաւորաբար եւ ի հաշտութիւն համոզէ :

Իսկ Արծիւը որ բացակայութեամբ Վարդապետ բունիին մէջ նստած կողբայ միշտ ի վերայ ազգային երկպառակութեան . չէ թէ դատաւորական համարձակութեամբ , հապա ծառայական խոնարհութեամբ նոյն Մովսիսի սիրայից խրատ կ'յիշեցնէ կուսակցութեամբ կուռուղ ազգա-

յին երկու եղբայր « Արք եղբայրք էք, րնդէ՞ր զրկէք զմիս
միանս » • Այս յորդոր եթէ ծանր թուի խաղաղութիւն
չի տիրող զրկիչ ընկերին, եւ սկսիինքն ալ խստասրտութեամբ
մերժել այս հաշտութեան միջնորդութիւն կամ նորա բիրդ-
պատասխանին մեր դէմը բերէ • ալ խնսելու բան չունի
Արծիւը • Ըռութեամբ խոյս կուտայ Մադիանացւոյ երկիրը •



ԶՈՂԲ ԵՐԵՄԻԱՅԻՆ ԴԱՐՁՈՒՅԵԱԼ
Ի ՀԱՅԱՍՏԱՆ ՆՍՏԵԱԼ ՈՂԲԱՆՈՒԻ ԼԱՅ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ
ԱՐԾՈՒԻՆ

ԶԻԱՐԴ՝ զատաւ, եւ նստաւ մենացեալ բաղմազաւակ
որդւովք բերկրեալ եւ պերճացեալ մայրն Հայաստան •
արդ անզաւակացեալ իթրեւ այրի լցեալ տրամութեամբ •
որ իշխանն էր ազգաց եւ թագաւորութեանց առ մեծին
Արտաշէսիւ, Տիգրանաւ եւ Տրդատաւ, եղեւ այժմիկ
սարուկ եւ հարկատու •

Եւ դու, մայրըդ Հայաստան, հանդոյն Երուսաղէմի լա-
լով լացեր ոչ միայն ի դիշերի • այլ եւ ի տուռջեան եւ ան-
դադար եւ թորեցան արտասուք ի վերայ ցամաքեալ ոսկե-
րաշող ծնօտիւքդ • տիսին զայն տեսիլ աղիողորմ դրացի
բարեկամք քո • եւ նոյն իսկ խստասիրտ ապերասան, խորթա-
բարոյ որդիք քո • ո՛հ իբրեւ թշնամիք անարգեցին զքեզ եւ
չաճին գութ երբէք ի վերայ հարազատածին մօրդ •

Իբրեւ Յուդային եւ որդիք Հայկայ վարեցան դերու-
թեամբ ի Բաբելոն ի խուժաստան. տառապանք , նեղու-
թիւնք , վիշաք միշտ հասին նմա եւ ոչ երբեք եղիտ ղիւր
կամ հանգիստ յերեսաց օտար եւ ընտանի հալածչաց . որ
ազատն էր՝ եղեւ ստրուկ , որ տէրն էր՝ իբրեւ ծառայ նստաւ
իմէջ հեթանոսաց :

Սուգ առին ճանապարհք , անդ միայն սիօնի կամ Սօղոմոնի
տաճարին . իսկ աստ բիւրաւոր վանորէից , մենաստանաց եւ
Անուոյ հազար եւ մի եկեղեցեաց . սպառեցան ուխտա-
ւորք եւ ոչ գոյր ոք երթ եւ եկ ի հանդէս տօնից տարեկա-
նաց . դրուէր տաճարաց եւ խորանք բարձրակամարք եղեն
համայն ի յապականութիւն . ընդնմին եւ խաչակիր պաշ-
տօնեայք նոցա բարձան ի միջոյ :

Սէգ եւ բարձրագլուխն Հայաստան , ո՛հ խոնարհեցաւ
մինչեւ ի դեռին . զի՞նչ էր ամբարշտութիւն նորա , զի
կորացոյց զնա Տէր . վկայեա դու Խրեմիսագ Հայոց՝ Մովսէս ,
ամբարտաւանութիւն , բարձրայօնութիւն եւ մանաւանդ
յամառ խտասրտութիւն . այսօրիւք առաւել մեղար դու
Հայաստան , ձեռն արդարութեան զայդ բեղ խառտիժ
չափեաց . այդպէս կորանալովդ կարկամեալ կաս աւատիկ :

Բարձաւ եւ իբէն ամենայն գեղ վայելչութեան , որպիս-
իօք ի դստերացն սիօնի եւ Յերուսաղէմէ , նազելիդ . Հայաս-
տան . վայելչութիւն թաղիդ , վայելչութիւն իշխանական
դաւազանիդ , վայելչութիւն աղատագնեայ նախարարու-
թեանցդ , վայելչութիւն մարտադիր զօրավարացդ եւ տիր-
աւէր զօրացդ , վայելչութիւն Արտաշատայ , Վաղարշապա-

տայ եւ Մնույ, վայելչութիւն իշխանաշէն աւանաց, շէն
 շէն գիւղորէից, դեղեցիկ դեղեցիկ գերտաստանաց, վայել-
 չութիւն անձնանուէր հայրենասիրաց Վարդանայ, Վահա-
 նայ եւ Մուշեղի. վայելչութիւն որսասէր բազէակիր երիտասա-
 դաց. վայելչութիւն հրապարակազարդ ծերոց եւ խռռն-
 երամ խաղասէր մանկանց, վայելչութիւն քողասէր հարսանյ
 չքնաղադեղ օրիորդաց : Այս վաղանցիկ վայելչութիւնք
 մարմնոյդ էին մասն. իսկ ապա հոգւոյդ, ողբալով յիշեցից
 եւ զայն. վայելչութիւն գերապանծ Եկեղեցւոյ քո, վայել-
 չութիւն քաջ եւ անձնադիր հովուաց, Գրիգորի, Ներսիսի
 եւ Սահակայ, վայելչութիւն հրաշարուեստ հեղինակաց
 դպրութեան քո Մեսրոպայ, Մովսէսի եւ Եղիշէի. վայել-
 չութիւն քարոզախօս բեմին եւ Բահանայազարդ սեղանին.
 վայելչութիւն հոգեւոր հարսնարանիդ. երգ եցիկ մանկանց,
 իհ առաւել քան զամենայն վայելչութիւն միաբանական
 հոգւոյն եւ երկնաւոր առաքինութեանն :

Յիշեա եւ դու արդեօք, Հայաստան, զօր տառապանաց
 քոց զօր անցուցեր ի նախնի դարս. զօր անջատման քո ի բնա-
 կանուէնդ զաւակացդ. թախծեաց յոյժ ընդ քանկալի ցան-
 կալի ինչս քո եւ ընդ հայրենատուր սեփհական սահմանս.
 զոր նիզակք քաջաց քոյին չափեցին քեզ. արդ աշխարհքո,
 երկիր քո, տուն քո եղեւ բնակութիւն օտարաց, կշտապինդ
 վայելին եւ ցյադ ուտեն նոքա առաջի քո. իսկ որդիքդ
 նօթի նուաղեալ հային եւ հալին աջօք :

Մեզս մեղաւ Երուսաղէմ, վասն այնորիկ ամենայն
 գովիւք նորա կօր ի գլուխ առնէին զնա. միթէ եւ դո՞ւ
 նման նմին մեղս մեղար, Հայաստան, զի նոյն չարիքն որ

անցին ընդ Հրէաստան եւ իբեզ էանց. սով, սուբ, պաշտ-
րումն, աներումն, գերութիւն ժողովրդեան, ցրումն ընդ
ամենայն ազգս եւ այսպէս ամայանալ տեղի դրանխտին :
խանձարուր եւ օրարան Նոյածնեւոր զարմին :

Ընդ Երուսաղէմի ձայնակցեալ գոչեալ ուժգին, Հայաս-
տան, ձեզ ասեմ, ձեզ ասեմ, ով անցաւորք ճանապարհաց
եւ աշխարհագիրք Եւրոպիոյ, որ զփառս հնոյն Հայաստանի
յաւերակս իմ շրջեալ նշմարէք, դարձայք, հայեցարհւք եւ
տեսէք: Թէ իցեն երբեք ցաւք ըստ ցաւոյ լեալ, որ ի վերայ
իմ հասին, հասին եւ արկին կիս ի մահի՞՞ մահագուշակ ,
մաշեցան ոսկերք իմ բազմաժամանակեայ հիւանդութեամբ
այսպէս հեծեմ հանապեղ իբրեւ անոք անօգնական անդամ
ալոյ՞՞ անկեալն ի Բրովպատիկէ. ով է որ բռնէ զիս իցաւոյ
աստի. հատաւ յոյս իմ այլ եւս չկարեմ հանդարտիլ, փոքր
միւն եւս մեռանիմ կուցէ յուսահատ Թէ ոչ արագ ինձ
այց ելցեն կենարար ոտք Յիսուսի :

Որ երբեմն Մարգարէին ձայնիւ հրաւէր տայր Արա-
բատեան գնդին ի վրէժխնդրութիւն անպատմբից . ո՛հ ,
անպատկու ջնջեաց ի միջոյ իմմէ զընտիր լինտիր զօրուց իմոց .
ժամանակ բեկման; ժամանակ տառապանաց, եւ պէս պէս
Թշուառութեան երբեք ի վերայ իմ. ի հնձանի չարչարա-
նաց ընդ ոտիւք Թշնամոյն անխնայ ճմլեաց զպատուական
բերս փրեցելոյ այգւոյն Արարատայ. այս հատուցաւ ինձ
իրաւամբ Տեառն, որ փականաց զիս ցանկով իշխանական
պահպանութեան. որ զարդարեաց ձողաջարձ նիզակաւն
Տրդատայ եւ բաջացն Հայոց. այս ջանից եւ երախտեաց
փոխարէն զի՛նչ, որ մնայր ինձ այգւոյ Տէր եւ մինչ անի

ուհէր քաղել յինէն խաղող սիրոյն . փուշ նախանձու, փուշ
խոցոտիչ նենգութեան, փուշ խռովութեան եւ երկպառա-
փութեան բերի նմա : Վրէժխնդիր ձեռն Աստուածային
դիզեաց եւ կուտեաց զամենայն փուշ չարութեան իմոյ
նովիմբ իսկ վառեաց եւ հրդեհեաց զքաջաբեր բարունակս
եւ զորթս առ հասարակ Արարատեան այգւոյն :

Ընդ քեզ, ողբերգակդ Երեմիաս, ընդ քեզ աւասիկ ի լալ
մատուցեալ է եւ Վասպուրական Արծուին . ակն քօ իջց
արտասուս եւ թանային լալիքդ ի վերայ մոխրոյն Երուսաղէ-
մի . ո՛հ, ցօղեսցին եւ իմ աղի կաթիլք աչաց ի վերայ հայրե-
նի աւերակաց իմոց : Ձեռք Զօրաբարէլի եւ Եզրասայ
չինեցին անգրէն զքոյն Երուսաղէմ . որով վերջին փառք
նորին քան զառաջինն գերագոյն եղեւ . իսկ իմոյն Հայաս-
տանի ո՛ւր է նորոգիչ Զօրաբարէլ կամ Եզրաս . միթէ աւե-
րակք հայրենեաց իմոց, աւերակք յաւիտենից լինելոց են .
անցին գնացին առաջին փառք Հայաստանին եւ ոչ եւս
անգրէն դարձան յետս :

Ասա, Հայաստան, եւ խոստովան լեր ընդ Երուսաղէմի .
արդար է տէր Աստուած, դու դառնացուցեր զնա . արժա-
նի՛ իսկ էիր այն ամենայն չարեաց, որ եկին ի գլուխ քօ .
Էսայիաս ի դիմաց Աստուծոյ զնոյն սրտառուչ տրտունջ եւ
վասն քօ բառնայ . զի՞նչ ինչ խնամք այցելութեան տունել
էր քեզ, եւ նա ոչ արար . սահման չափեաց քեզ արեւելեան
վայր Դրախտին եւ երկիր քաջաբեր . Թագաւորութիւն ,
Քահանայապետութիւն, եւ այն զարմանազան սքանչելիք,
զորս ի ձեռն Գրիգորի, Տրդատայ , Ներսիսի եւ Սահակայ
եցոյց քեզ . իսկ դու խստասիրտ ապերախութեամբ մահու

խայտառակութեան դատեցեր զբարերարս քոյին . իբրեւ
Յակովբ կերեր կշտապինդ եւ յագեցար . ո՛հ, դարձար ան-
կուշեցեր զսիրելիսն . այս էր շնորհ երախտադիտութեան քո :

Այս առ Երուսաղէմ Յիսուսեան սպառնախօս պատգամ
եւ առ քեզ հնչի . Հայաստանն Հայաստանն, դու ոչ պակաս
քան զԵրուսաղէմ ձեռն մխեր յօծեալս Եկեղեցւոյ քո եւ
զընտիր ընտիրս ինոցունց կոտորեցեր անդամութեամբդ .
որոց ձեռք խկ այց արար քեզ Տէր , քանիցս Ժողովեաց
եւ զորդիս քոյին իբրեւ զձագս հաւուց առ Թեւոք նոցին
պաշտպանութեան . նոքին քեզ աւետարանիչք էին խաղա-
ղութեան . խկ դու յաւուրս նոցին մերժեցեր զխաղաղու-
թիւն եւ ոչ գիտացեր . չարարեր դու զքեզ արժանի օրհ-
նութեան արդարոցն այնոցիկ , որով բարձրանայիք դու-
ցարդ . այն ինչ խռովեալ սրտիւ եւ ցաւօք ելանէին ի բէն
զաչս ի քեզ դարձուցեալ կրկնեցին զՅիսուսին բանս . « Թող-
եալ լիցի՛, Հայաստան , եւ տուն քո աւերակ նման Երուսաղէ-
մի . եղեւ եւ կատարեցաւ զոր խօսեցան , արդ այսպէ՛ս աւերակ
դնիս եւ մնառ եւ չիք շինող ի միջի քու » :

Այո՛, Տէր՝ Տէր զօրութեանց , բարձեր ի Հայաստանէն
որպիսեօք երբեմն ի Հրէաստանէն եւ յԵրուսաղէմէն զայր
հզօր իբրու զքաջաբազուկն Հայկ , Արամ , եւ Տիգրան . զհրա-
կայն եւ զօրաւորն եւ զայր պատերազմող իբրու զսէգն Տըր-
դատ , Բիւրատեան զօրավարն Սմբատ , Այսապատեան Արշա-
ւիր , Ներսէս եւ Հրահատ . բարձեր այն եւ զմարդարեաշնորհ
ընտրեալս յԵկեղեցւոյն Հայաստանեայց . զհրաշալիս Ներ-
սէս , Իսա հակ , եւ Մովսէս . Թողու մ՛ զօքանչելի խորհրդականս
եւ զլիմաստուն ճարտարապետս եւ զհանճարեղ դուռնի դի-

բըս. Եւ այսոցիկ փոխան զԲնչ, իշխանք մանկունք եւտղայ-
ամիտ, փառախնդիր եւ շահասէր խաբէքայք տիրեցին մեզ.
անկաւ երկպառակեալ ժողովուրդն Հայոց այր ընդ այրեւ
այր ընդ համազգի ընկերին իւրում եւ ոչ ընդ օտար, ընդ
հարաւ մանուկն ընդ ծերոյն եւ անարգն ընդ պատուա-
կանին. արհամարհեցաւ ու հասարակ յարգանք հարց եւ
որդիք ապառոււմ եւ անպատկառ դժանւունքն ծիծաղ
ծիծաղեցին :

Եւ դու, Հայաստան, ի վերայ ամենայն մեղաց քոց ձու-
քաղ եղեր հանդոյն Հրէաստանի. որդիքն քո զորս սիրէիր
սրով անկան, եւ իշխանք քո իոնարհեցան ի բարձրութենէ
դահլիցն եւ մնացորդ ժողովուրդ քո տառապին աքքատու-
թեամբ. թշուառացար, յոյժ, փոքր միւս եւս եւ այդ խու-
նարհ վիճակէ քումմէ յերկիր կորանաս :

Ձեռնեալու Տէր, մի թողուր, կանգնեա, կեցո զՀայաս-
տան, խնայեա եւ մի խապառ ճաւաքաղ առնելով ապական-
ներ զմնացորդ զողկոյզս սիրեցելոյ այդւոյն Այրարատայ.
գիտեմ, Տէր, զի դեռ պահես ի նմա զօրհնութեան ճրուս.
որոց նուիրական աղերսարկունքի զքեզ յարգար ցամամեզ.
զիջուցեալ հաշտ առնեն ընդ տառապելոյն Հայաստանի :

ՁՈՐԲ ԱՆՄՈՒԹԱՐ ՍԳԱՅԵՆՈՅՆ ՀԱՅԱՍՏ-
ՏԱՆԻ ՀԱՐՈՒՆԱԿԵ , ԱՐԺՈՒՐԻ

ՀԱՅՈՑ Եկեղեցիք Տփլիսոյ մէջ քսանչորս հատ
 հասարակ գմբէթաւոր կամարակապեւ դեղեցկաշէն.
 Եկեղեցին է վանք կամ սուրբ Էջմիածին ուր այժմ կ'նս.
 վիճակաւոր Զալալեան Սարգիս Արք Եպիսկոպոս. որ արդէն
 իւր հռչակաւոր անուամբ ծանուցեալ է շատ տեղեր. գո-
 վելի միջոցներ կ'մտածէ ու կ'հնարէ ազգի յառաջադի-
 մութեան, որ իւր աշխատասէր մտաց արդասիքն են, թէպէտ
 քանի տարուց ի վեր Սանահնու հռչակաւոր վանից մէջ
 հիմնարկած է մի Եկեղեցական դպրոց, որ դժբաղդաբար
 ինչպէս կ'պատմուի, զանազան առիթէ առանց սկզբնաւու-
 թութեան կ'մնայ ցարդ. Հանգուցեալ ՆԵՐՍԷՍ վեհափա-
 ռին հրամանաւ Հայաստանի մէջ ճանապարհորդութիւն
 արած միջոցին, եւ իւր նախորդ վիճակաւոր հանգուցեալ
 Սարապետ Եպիսկոպոսէն մնացած որչափ պիտանի ու հե-
 տաքրքրական ձեռագիր հին մատեաններ հաւաքած ունի.
 որ պահած է Սանահնու մէջ տպարան բանալու եւ այն
 տեղ հրատարակելու նպատակաւ. քանի ձեռնասուն կամ
 հոգեղաւակներ ունի, որ իւր առանձին ինամքով ուսման
 տուած է. որոնցմէ նշանաւոր են Պ. Նիկողայոսն եւ Ապով-
 եանց Պ. Գէորգն, Մօսկուայի համալսարաններ կրթուած.
 առաջին արդէն մասնաւոր դպրոց ունի բաց արած Տփլի-
 սոյ մէջ որոյ բարեկարգութեան շատեր կ'վկայեն. երկրորդն
 եւս Պ. Գէորգ Ապովեանց երաժշտութեան (նօթայի)
 եւ ընդհանուր պատմութեան դասատու է Ներսիսեան ազ-

գային ուսումնարանին մէջ . Հնորհակալութեամբ սրտի կ' յիշեմք նա եւ նորին Սրբազնութեան առ մեր Արծիւ ցոյց տուած սէրն ու երախտիք, որ իրեք ամսոյ չափ խնաւ մօք ժողովեց ու մեծարեց պանդուխտ Արծուին օգնական եւ առիթ լինելով նորա նպատակին :

Տփլիսոյ մէջ բաւական ուսումնարաններ կ' գտնուին . սակայն որը արքունական է . որը առանձին մարդիկ բացած ու թողալով աշակերտ կ' կրթեմն . կ' մնայ մի ուսումնարան եւս յիշել Տփլիսոյ մէջ, զոր արժանայ շատակ 'ՆԵՐՍԷՍ հանդուցեալ Սրբազանին ազգասէր ու առաքինի կամբք սահմանեց, որոյ բարերար ու անչափ երախտեաց կշիռ հաւտուցանելով 'Նորին յաւերժական անուամբ պսակուած է նոյն ուսումնարան 'ՆԵՐՍԷՍԵԱՆ վերտառութեամբ : Երեք հարիւր յիսունի չափ մանկտի կ' դաստիարակուին այս տեղ, գլխաւորապէս ազգային ուժ եւ յոյս այս վարժարանիս վերայ է . եւ իրօք նորին Հիմնադիրն այնպիսի հաստատուն ու բարեկարգ միջոցներ հնարած է , որ ոչ միայն Տփլիսոյ այլ ընդհանուր Ռուսաստանի Հայոց յոյս եւ լոյս կարելի է համարել . 20—25, 000 մանէթի չափ եկամուտ ունի տարին անխափան, մէկ մասն խանութներէն եւ ուրիշ կալուածներէն . մէկ մասն էլ մոմի մեքանաւառութեան գիներէն . վասնզի Տփլիսոյ Վիճակաւորին ձեռքի տակ եղած բոլոր Հայոց Եկեղեցեաց մոմեր վարժարանի կը նիքով պէտք է լինի, որ ընդունվի . ապա թէ ոչ արգելուած է խտրու . այս միջոցով միայն 10—12, 000 մանէթ եկամուտ կուգայ . թողում կտակներ եւ մասնաւոր ողորմութիւններ : Վարժարանի վերատեսչութիւն յանձնուած է Վիճակաւորին եւ հոգեւոր ժողովքին . նմանապէս հաշիւ տեսնել , բարեկարգութիւն առնել սոցա ձեռքն է : Աշա-

կերտաց ուսանելի նիւթերն են Արօնադիտութիւն, Ընդհանուր պտտմութիւն, Հայկաբանութիւն, Աշխարհագրութիւն, Թուարանութիւն, Երկրաչափութիւն եւ Երաժշտութիւն, Ռուսերէն լեզու եւ Գաղղիերէն։ Աշակերտներէն վաթսունի չափ միայն ձրիավարժ են եւ գիշերօթիկ։ Մնացեալներ թոշակաւոր են։

Այս Ներսիսեան ուսումնարան իրաւամբ մեծ պարծանք է մեր ազգին այնպիսի ճոխ եւ երեւելի քաղաքի մէջ։ 30 տարի կրկնի սորա հիմնարկութիւնն, առաջին շէնքը անյարմար լինելով թէ ըստ տեղւոյն եւ թէ ըստ ձեււոյն, այժմ ներքին յարկի մէջ դրած են Տպարան, որ նոյն ուսումնարանին ընծայուած է Ազնուական Արծաթեան Գէորգ աղայէն. իսկ վերին յարկը իրեւ պանդոկ դարձած է, ուր կնատին պանդուխտ անձինք. սորա վերնա-յարկի մեծ դահլիճին մէջ ներկայացուցած են Շուշանիկի օղբերգութեան տեսարան։ Նոր ուսումնարանի գեղեցիկ շէնքով ու կանոնաւոր ձեւով Տփխիսոյ երեւելի շէնքերու կարգն է, աշակերտաց շահուիլ ու հագուել յարմար եւ ըստ ամենայնի վայելուչ է քաղաքական կենցաղավարութեան. ուսումնարանն Հոգեւոր եւ Ազգային կանուանութիւն։

Ներսիսեան ուսումնարանիս վերայ այսչափ միայն խօսելով համառօտութեամբ անցնենք մանաւանդ որ շատ պարագաներէ անտեղեակ եմք. հետեւցուցեմք Տփխիսոյ Ազգայնոց ուսանողաց թիւը վերոյիշեալ վարժարաններու վերոյ չափերով կամ տեսնելով։ 1000—1200 տղաք հազիւ ուսման կ'պարագին եւ սոցանից թէ որ մաղը անցուցվի, կէս հազիւ դուրս կուգայ. այս բնական է ամէն տեղաց. իսկ մնացեալ հազարաւոր մանկտիներ ուր են։ Յուսով եմք, ինչպէս որ իրենց սրտի եռանդն ու փափագ տեսնեք, քիչ

Երբեքն ուսմունք ընդհանրանայ Տփլիսոյ մէջ . տարածելով
 իւր լոյս առ հասարակ Ազգայնոց վերայ . որոնցմէ կ'սպասուէր
 մեծամեծ օգուտներ ու անշուշտ յառաջադիմութիւն . այն-
 պիսի տեղ, ուր նիւթական կարողութիւն եւ բախդի յաջողա-
 կութիւն եւս ձեռնտու է նոցա : Աղջկանց դաստիարակու-
 թեան օգուտը լու ճանչնալով մեր Ազգայինք, նոցա հա-
 մար դպրոցներ բանալ ամենապիտանի հարկ եւ ազգի լու-
 սաւորութեան բուն միջոց համարուած է . այս մասին եւս
 Տփլիսեցիք արդէն սկսած են աղջիկներ կրթութեան տալ .
 այլ ո՛ր, Արքունի ուսումնարանները, ուր ձեռագործներու,
 բնարերդութեւն լեզուազրիտութեւն մէջ կ'արծեմ միայն կ'յառա-
 ջանան . պակաս թողլով մտացական եւ բարոյական կրթութիւն .
 սորա համար արդէն խորհած են որ ազգային յատուկ ու-
 սումնարան բանան եւ այն աղջկանց սիրան ու միայք ընտա-
 նի կերպով կրթեն, որ հանդերձութիւն ապագայից լուսաւո-
 րութեան մայր լինել . Բերկրութեամբ սրախ կ'սեմք , որ
 Արշակունեանց Աղա Վարդան Ազնուականն բարեպաշտ ազ-
 գասէր կամօք բարեհաճել է մօտ օրերս աղջկանց ուսում-
 նարան կառուցանել Տփլիսոյ մէջ եւ հոգալ զայն իւր ծախ-
 սով . այս եթէ ստող լինի, ինչպէս որ կ'ցանկամք ի սրտէ ,
 ահա միակ իսկական ու առաքինի մեծագործութիւն , որ
 հասարակաց օգուտ կ'նծայէ նիւթապէս եւ բարոյապէս ,
 եւ այսու կարծանանայ նա ինքն իրաւամբ այն Արշակուն-
 եանց տոհմի առաքինի եւ վեհանուն իւր վերայ ընդունել
 իբրեւ շինարար հայրենեաց եւ բարերար ազգիս :

Տփլիսոյ կանանց համար մի կուսաստան կայ քաղքին
 մէջ սուրբ Ստեփաննոս անունով փոքրիկ եկեղեցի, որոյ օր-
 րահին մէջ կան շինուած մի քանի սենեակներ , որ կուսա-
 նաց խուցերն են . այս վանք Բեհբութեանց շինածն է եւ

վանից գլխաւոր կամ մայրապետն այժմ Բեհբուլթեանց ազգէնէ : Սոցա պաշտօնն է այն տեղի ժամերգութիւն առնել, սաղմոս ասել եւ վարապոյր ու սփռոցներ նախշել առըղնադործութեամբ, ուրարակիր են եւ սուրբ սեղանի սպասաւորութիւն, լուսադարութիւն, դպրութիւն ամէն իրենց վերայ. սեւ սեւ վերաբիւր կ'հագնին, քող կ'ձգեն գլխուն վերայ. ամէն անձ չէ կարող սոցա կարգին մտնել, որովհետեւ նախ պիտի գիտենայ կարգաւ. երկրորդ պէտքէ լինի կալուածող կամ եկամտից տէր. թէ չէ Հայրենական ժառանգութեան մասն կամ օժիտ հետ պիտի բերէ. ուրիշն աղքատաց համար չէ այս : Մի քահանայ յատկացածէ իրենց համար ժամ ու պատարագ անելու : Պաշտօն մի ունին ժողովրդեան մէջ այս կուսանք, ամէն մեռելի տուն կերթան անմիջապէս զոյգ զոյգ իբրեւ մխլթարիչ. մեծ պատիւ ու ընդունեցութիւն ունին եւ մասնաւորապէս վանքին եւ իրենց համար թոշակ կամ հոգեբաժին կ'ստանան :

Ուրիշ կալուածներէ, այլ եւ այլ տեղերէ եկամուտներ կայ այս վանքին. որով օրէ օր հարստանալու հետէ. շատ բարեկարգութեանց պիտանութիւն եւ կարողութիւն ունի, պատեհութիւնն տեսնանք երբ :

Տվիսիսոյ ժողովրդեան ջերմեռանդ Աստուածաշտուութիւն գովութեան արժանիէ, սակայն եկեղեցականութեան, ժամերգութեան քանի մը ծէսերու մասին շիտակ խօսելով պակասութիւններ կ'գտնուին. եկեղեցականաց պճնասիրութիւն քիչ մի կարգէ դուրսէ. դպրութեան կարգի մէջ երգեցիկ մանկունք չկան. թէ շարական ասելու թէ պատարագին երկու տղայ հազիւ կան, միւս բաներ առհասարակ քահանայք կամ սարկաւազներ կեղանակեն հաստ ձայնով. եկեղեցեաց յատակը փռուացքը չունին. ժողովուրդ-

կօշիկներով եկեղեցւոյ մէջ կ'կանգնին, շատերն առանց ծըն-
րագրութեան, ոմանց ձեռքն էլ ցուպ (պաստօն) բռնած
ոտքի վերայ կ'կենան մինչեւ ժամու վերջ. հարուստ իշխա-
նաւորաց համար տարին միանգամ ժամ գալ հրաշք է .
այնպիսիք կան, որ սուրբ Հաղորդութիւնն անգամ տուն
կերթայ կուտայ քահանայն. եւ թէ պսակն եւ մկրտութիւն
անգամ տան մէջ կ'կատարեն երբեմն :

Սովորութիւն ունին Տփլիսոյ Ազնուականներ կամ հա-
րուստ անձինք, որ իրենց մեռելը դադարով ու զիազարդ
կ'թաղեն. գերեզմաններուն վերայ գմբեթ, արձաններ եւ
ուրիշ կամարածեւ շինուածներ կ'կառուցանեն. հարուստ-
ներուն որ մեռել պատահի՝ երկու կամ երեք օրով կ'պահ-
ուի, մինչեւ որ այն մեռելի տէր որչափ ազգական, դրա-
ցի կնիկներ կան ամէնուն սեւ զգեստներ ձեւէ որ հագնին,
նուագարաններ եւ զինուորներ բերել տայ. մի սեւաքօղ
կառք սեւաւորուած ձիերով ու կառավարներով մեռելի
ետեւէն երթալու համար. եւ այնչափ կանանց համար էլ
զատ-զատ կառքեր պիտի վարձէ, ճանապարհին մինչեւ յեւ-
կեղեցւոյ դուռ եւ մինչեւ ի գերեզմանոց կանաչ ծառի
ձիւղեր կ'փոէ. եւ ապա Եպիսկոպոս, վարդապետներ եւ
քահանայք զգեստաւորուած կուգան հանդէս որ կենդա-
նութեան օրով չեն տեսած. այսպիսի հանդիսի ծախսը տան
հազար մանեթի չափ կ'հաշուէին. որ ըստ մեզ է հարրւր
հազար զուրուշ. այսպէս է ահա Ազնուական մեռելներու
թաղման կերպը : Այս սովորութիւն է նա եւ այնպիսի Ազ-
նուական կամ տէրութեան ծառայող անձանց, որ խնամու-
թիւն կանեն Վրաց ազգի. եւ Ռուսաց հետը :

Չափազանց շուայլութեան փափաղը լաւ եւս ախտը
տիրած է Տփլիսեցւոց մանաւանդ. կանանց ազգի մէջ,

որոյ վնաս մեծ պիտի լինի անշուշտ , եթէ չուտով չափա-
ւորութեան կարգը գտնել չիւլթան . ինչպէս որ իրենք էլ
ղգացած են արդէն . վասն զի Լւրոպայի նորաձեւութիւն-
ներ (մօտաներ) սկսեր են այս քաղքի մէջ յաճախել եւ
հրապարել աշխարհասէր աչքեր ու հեշտասէր սիրտեր :

Հասարակ ժողովրդեան մէջ կայ մի տեսակ սովորութիւն
որ մէկին աղջիկ տալու համար կամ իւր փեսայ անելու ,
հարիւրաւոր , հազարաւոր մանկութեան կուտան աղջկան
հետ , բաց իօթիաներէն , քանի տարի յառաջ Տփիսիսոյ մէջ
սովորական եղած էր ընտանեկան , աւ եւ տրական խօսքեր
եւ գրութիւններ աւ հասարակ վրացերէն անել . սակայն
այժմ անհետանալու վերայէ գրեթէ . եւ այս անհետանա-
լուն պատճառ՝ ինչպէս կպատմեն Ներսէս վեհափառին չը-
նորհքն է՝ որ այնչափ հոգ ու փոյթ ունեցած է Տփիսի-
սոյ ժողովրդեան մէջ աղգային սեպհական աւանդութիւն-
ներ կենդանի եւ անարատ պահել . նոցա մէջ ուսման եւ
միութեան սէրը վառել քարոզելով , ուսումնարան հաստա-
տելով եւ դաստիարակելով : Յաւալի բանէ որ կըսենք թէ
խոստովանութիւն անգամ վրացերէն կանեն եւ գեռ եւս
կան մինչեւ ցայսօր այն պառաւ անձինք , որ վրացեվար կա-
ղութեն յեկեղեցին եւ վրացեվար կխոստովանին Հայոց
քահանային :

Տփիսիսեցոց բուն լեզուն որ հասարակութեան անու-
սումն մասի մէջ կխօսվի , չգիտցող անձ չէ կարող հասկա-
նալ . վասնզի այլայլած կերպով կարտասանեն բառեր , զոր-
օրինակ « եի » էլի «ի ձրայ իմ արմատ . . . գիտոմա-լինդ
էլ լիտոցոայ համ իս պահոմ . լէ իքին գիդիս . նիդ
օրն էլ է » ե , պէպք ածա էլի » . այսինքն . « Եւ ես քո վե-
րայ եմ զարմացած . . . գիտութիւնդ էլ լինջ ժամանա-

կուսակցութեան համար ես պահած թէ մի բան գիտես, նեղ օրն էլ այս է. դորձածէ էլ ինչ » :

Տփղիսոյ Հայ Համարութեամբ (համբար) ասուած հասարակութիւն գեղեցիկ գեղեցիկ օրէնքներ ու կանոններ ունին . իւրաքանչիւր Համարութեամբ իրենց մէջէն մի գլխաւոր ունին ընտրած . որչափ պակասութիւն հաշմանք պատահի իրենց մէջ՝ ժողովով այն գլխաւորին ներկայութեան կ'դառնան առանց դատաստան դնելու . եւ իրաւանց զին կամ յանցանաց տոյժն (շտրապ) սահմանած հն վճարել այն անտուկին՝ որ յանձնուած է գլխաւորին . իրենց մէջ կ'դատեն եւ կ'վճեն իրենց վերաբերեալ ամէն բաներ . թէ պատահի նոյն Համարութեամբ կարգէն մէկ մեռնի, կանոնով պարտաւորուած են ամէնքն էլ այն օր խանութներ փակել եւ երթալ իթաղումն իրենց արհեստակցին, եւ մնացողը պիտի տուժէ : Աղքատաց, եկեղեցեաց կամ նուիրակաց եւ ուրիշ այսպիսի տուրքեր տուժանաց անտուկէն կ'վճարեն, իբրեւ հասարակաց արդիւնք համարելով : Աստի թէ վաթսունի չափ համարութեամբ կան . եւ իւրաքանչիւր համարութեամբ մի կոնգակ ու դրօշակ ունին շինած եւ այն գլխաւորին յանձնած . Բարեկենդանին , Ջատկին, Աղանդին նոյն համարութեամբ խմբովին իրենց գլխաւորի տուն կերթան, չայ ու շաքար եւ այլ ընծաներ տանելով հետերնին . դրօշակներ բարձրացած կտրիճ Հայ երիտասարդներուն ձեռքը, զուռնան նաղարան յառաջուց, խմբովին ետեւանց ու կողերից շարուած հանդիսով փողոցէ փողոց կանցնեն , — թէպէտ անկանոն, բայց գեղեցիկ հանդէս, գլխաւոր կընդունէ զանոնք իւր տուն եւ ըստ արժանւոյն կ'պատուէ եւ կը մեծաբէ :

Առջը ձնդեան օր, մանաւանդ այս տարի առաջին եղաւ

որ Զրօհներաց հանդիսին օր այն ահագին ամբոխը գետի տարածութեան մէջ ջրին եզերքը լցուած , եւ այս դրօշակներ վայելուէ կերպով կարգաւորված անկիւն անկիւն փողոցաձեւ շինած էր ամբոխն . այն Սրբազան հանդիսին եւ ժողովրդական մեծ բազմութեան մի վսեմ շքեղութիւն էին տուած դոյն զգոյն փայլօղ եւ ծածանօղ դրօշներ :

Մուշթակուիւ խաղ կամ սովորութիւն մի ունին Տփլիսոյ հասարակութեան կտրիճ մասն . որ ինչպէս կ'ապամեն ի վաղուց մնացած բանէ . ներքին թաղ վերին թաղ ժողովուած խումբ խումբ բանակ կ'կազմեն ամէն կիրակի , աւելի բարեկենդանի եւ տօնի օրեր , կերթան Հալուապար ընդարձակ դաշտի մէջ կսկսեն մէկ մէկու հետ կռուիլ . հազարաւոր անձինքներէ մի ահագին տեսարան կ'բացուի . երկու կողմէն մէկ մէկ զօրապետ կամ կարգադիր կ'ձեւանան , ձիեր հեծած խրախոյս կ'կանչեն , հրահանգ կուտան . եւ կ'յարձակին նախ ձեռքով մէկ մէկի . քթին , աչքին , բերնին կ'զարնեն , մինչեւ որ մէկ կողմ սկսի տկարանալ տեղի տալ . այն ժամանակ պարսաքար , ձեռաքար ետեւէ ետեւ կտեղան փաղջօղներու գլխուն , հանդիսականներ տեսնես , շատն ազնուական ու պատուաւոր մարդիկ ձիերով կառքերով էկած ստակ կ'բաշխեն , քաջալերս կուտան . պատերազմի պէս դըրդիւն , աղաղակ , հարուած ու փախուստ կ'դռան չորս կողմ . զուռնան , նաղարան յաղթականաց առջեւէն հնչելով կերթայ . քաղաք մտած ժամանակ խանութներ կ'փակուին , ապա թէ ոչ՝ յաւարի կերթան :

Հետեւեալ օր կ'տեսնես մէկի աչքն է կ'ապած , միւսին թւ , մէկին քիթն է ծռած , միւսին բերան . բայց զարկողն ու զարկուողն մէկ զմէկ տեսած ժամանակ եղբօր պէս սիրով կ'վարուին :

Առ այժմ այսչափս միայն գիտելով զրեցինք Տիփիսոյ
աղգայնոց վիճակ. ի վերջոյ շնորհակալութեան ուղերձներ
նուիրելով նոցին հայրենասիրաց ի դիմաց Վասպուրական
Արծառն, որում մխիթար եւ ավտիւիչ եղան այն պանդխտ
տուութեան մէջ ըստ ամենայնի կատարեալ եւ անկեղծ սէր
ցոյց տալով, որոց յիշատակ անմոռանալի երախտագիտութեամբ
կ'պահէ Արծիւ դրոշմած իւր սրտին վերայ :

Գարեգին Սրուանձատեանց .
Աշակերտ . Ժ . Վ . Վարդապետ :

ԱՐԱՄ

Ի Ճ Ա Վ Ա Տ Մ Ա Ր Տ Ի Ն

Հնչեն բանդառնք Հայկազանց,
Հրաւեր ի սէր հայրենեաց .
Հնչեն մուգայք ի Մասեաց,
Քոչեն ի լար նըւագաց .
Արիք արանց անլըկանդ,
Վառեալ ըզ ձեր սիրտ զեռանդ .
Կազմեալ ելէք գունդագունդ
Ի խազմ ի ռազմ առեալ թունդ :
Դիմէք վագէք սիգագնաց
Դէմ խաժամուժ թշնամեաց .
Նիզակ բարձէք, տուք նըշան
Դրօշք ծալ ի ծալ թող ճօճան :
Ի սկ ոյլ է այն Հայկազուն,
Իբրու զարեւ ի զօրուն .

Հեծեալ յանժոյժ երիվար,
 Սուրայ սլանայ օդապար :
 Հայ մուսայից հնչեսցեն լարք ոսկեթել
 Զայս քաջ դիւցազն ով իցէ, ո՛հ, ճանաչել :
 Հանթ եւ կայծակ թօթափէ,
 Ըզթշնամիս սատակէ :
 Եւ խոյացեալ զերթ առիւծ
 Զսոսին մաշէ իմահունս :
 Հայ մուսայից հնչեսցեն լարք ոսկեթել,
 Զայս քաջ դիւցազն ով իցէ, ո՛հ, դրուագել :
 Դիւցազն է այս ահարկու
 Դիւցազն հայկեան վրիժառու,
 Հուր ցոլանայ ի դիմաց
 Ի վրէժ ի վնաս թշնամեաց :
 Մուսայք Հայոց հարէք զծեր լար ոսկեթել
 Զայս քաջ դիւցազն ով իցէ, ո՛հ, դրուագել :
 Յուսին կախեալ ձիք դաղեղն,
 Կորով բազկին թռչին նեաք :
 Եւ հայկանիչ իւր վահան
 Ազատութեան սայ նշան :
 Հայ մուսայից հնչեսցեն լարք ոսկեթել
 Զայս քաջ դիւցազն ով իցէ, ո՛հ, դրուագել :
 Վաշտուք ահեղ նա վառեալ
 Զայն տայ գնդին քաջ որեար :
 Հայ մուսայից հնչեսցեն լարք ոսկեթել
 Զայս քաջ դիւցազն ով իցէ, ո՛հ, դրուագել :
 Ո՞րքէ դա վառեալ այդպէս զինք ի կուռ
 Զայն տուք նմա, թող ասացէ զանուն իւր :
 “ Երամն եմ ես հայրենասէր քաջագուն,

Գամ կոտորել զճակատ զճամբար ի շինամոյն .

Հայրենի տան եւ սահմանին ես պաշտպան

Եւ զիմ արիւն առ հայրենւոյս նուէր տամ ։

Օրհնեալ ես դու եւ բո սուր

Հոգւոյս շրթամբ լինէ ճակատիդ տայ համբոյր .

Հայկադաշնակ քնարիս իմ ձայն

Թող երգեսցէ զքաջդ Հայոց յաւիտեան ։

Արամ Բժիշկեան

Աշակերտ Ժ. Վ. Աբրահայ :

ՈՂՅԵՐԳՈՒԹԻՒՆ Ի ՔԱԶԱԿՈՐՍՎՆ

ՄԱԻՇԵՆ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ

Սահառուինն Բադ նախարար
Սողեալ ի սիրտ Վարդգէսաց ,
Քսու լեզուով օձի նման
Խօսի յախանջս երթուի մանկան .

Մուշեղին , դու արքայ մի ճար
Գլտիր առ ի թ եւ մի օնար ,
Նա միշտ կ'իտրնի վասլն բո չար
Սըշակունւոյդ գրաւել ըզգահ ։

Փռւթաւ տակ , աճապարե
Դու դժբանաց կարթմը լարե .
Բարձ Մուշեղին կեանք , հէրիք չէ՝
Ժառանգ սիրով դաւ կը դործե :

Տէր , ինչ կսեսդ դու հաւատար ,
Էրեակ է խոջս եւ սուտ չկայ ,
Հայոց եռիկր զկնի նորա
Գնաց սննդ էլ մէկ չկայ :

Խորհէ շուտով արքա դու քաջ ,
Եւք մի զանեղ այս մեծ իրաց .
Չէ թէ մարտիս պատերազմաւ ,
Հաղա հնարիւք մի նոր ճարտար :

Սեղան կաղմ , ձոխ վառաւոր

Հրաւեր կարդա բեր ի բո բուռն .

Դիւրին կարես այսպէս յաղթել

Սեգ Մուշեղին արիւն թափել :

Սահառուոյն այս նենգ խորհուրդ
Լսեց հաւնեց մանուկ երթուի ,
Պատրաստուեցաւ վայրի վարազ
Մաթիկոնոյն արեան ծարաւ ։

Հրաւեր զնաց առ Մուշեղ քաջ
Զքեզ կ'կանչէ գոռ վարազդաս .

Նախարաց խումբ եւ իշխանք

Նստեալ սրասենքեզ միայնակ :

Ելաւ կարեւ չայ նազանազ

Սուր , զենք , զրահ անձամբ առած ,

Ելաւ կերթայ կայտառ գոռարթ

Ա՛խ , ոչ զխաւ մահուան թակարթ .

Մուշեղ մի թէ դաշարն շիրաւ

Հեծած կերթաւ դու կամակար .

Քո թշնամին չէ ի ճակատ

Այլ իսեղան նենգ եւ խորդախ ,

Ինքնին կերթաւ չարեաց իբուռն

Դըժխեմ բախրին սնադորոյն ,

Հայրենանուէր արիւնդ անգին
Ո՛հ ախ թափէ ձեռք յոյներ իմ :

Սահառուներն այն վատ հողին
Վառեց նախանձ ըստ Աստուծոյն
Վարեւ իրազէ թեւքոյ կենաց
Այր անորէն աման չարեաց :

Յորդոր ծնողին, բարեկամաց
Սեղ Մուշեղին ոչինչ ազդեաց .
Չէ, ասէր, վատ չէ Մուշեղ,
Վամաւ կերթամես այն հրաւեր :

Ա՛հ, արեւուդ մեռնիմ, Մուշեղ
Դու մեր տոհմին սրայծառ արեւ,
Քեզ մօտալուտ է սեւ գիշերը,
Որ աչերուդ կածէ ստուեր :

Դուրս քաշէ, էլ մի կենար,
Քու սիրելի նոյժ քերական,
Հէծիր փախիւր այս չար ժամին
Վարադդառին սուր ժանիքէն :

Եւ գիտեմ սոյժդ, մայրիկ,
Մահ կը դուժեն ինձ այն ընթերք .
Բայց կերթամ ու չեմ փախչիր .
Մահուան բաժակն է Մուշեղին :

Ասաց Մուշեղ խրոխտ եւ ահեղ
Բերէք նոյժդն իմ փառահեղ,
Սիրտ իմ յօժար, ձիս կամակար,
Ո՛վ ախ ելնէ ինձ դիմահար :

Ահա ելան քաջ զօրափարք
Երթաւ ի կողմ Արշակունեան,
Մեկն ի միջի հուր բոցախառ
Կ թուի Մուշեղն է զրահախառ :

Որ ինժոյժ քերական հեծած
Օդապարէ իբրեւ հրեշտակ,
Ջենքերն ամեն լոյս է շողան
Տեսէք զինչ ասող որ կ'յցումն :

Երեսն իրաւ անահ անվախ
Մտաւ Մուշեղ առ Վարադդատ .
Ոտք ելան, ողորոյն առին
Նստաւ Մուշեղ արատուով բարձին :

Լցին ու խմեցին,

Եւ կրկնեցին միշտ Մուշեղին .
Արբեցաւ ու թափեցաւ,

Կորով բազկին ու ժ թուլացաւ :

Ժամ հասաւ սեւ գիշերուն
Ոտքի ելաւ շուտ Վարադդատ .
Աչքարեց Սահառուներն
Թէ սուր քաշէ թափքն ի դուրս :

Վեց վեց մարդ երկու կողմին
Ա՛խ, բռնեցին քաջին թեւէն .
Աչքեր դարձուց ի Վարադդատ
Արտուներ թափեց ասաց այս բան :

Այս փոխարէն իմ վարձուց
Այսչափ մարտից եւ վաստակոյ
Որ սըլաքով սուր նիղակիս
Ո՛հ, սըրբէի ճակիտս իմ քերտ :

Հայաստան հայաստան,
Այս է սրակ քո քաջ արանց .
Ողջ կեցիր, ո՛հ մեռանի

Քո ապաշնորհ ձեռքէդ Մուշեղ .
Նուիրական արեանս կաթիլ
Թող բողբոջն ըստ Աբէլին .

Երերեալ թափառեսցի
Վայենախանձ Սահառուներն :

Ա՛հ իմ քերական, աշխոյժ քերական
Հասիր եւ առ դիս քո քամակ
Ա՛հ Մուշեղին թեւեր կապած

Քու սեզ գլխուն ո՛վ բըռնէ տանձ
Ո՛ տայր ինձ արդ զքեզ հեծած
Չեռքս առնէի թուր եւ նիղակ :

Թող մեռնէի ի մեջ դաշտին
Եւ ոչ այսոյեւ նենգ սեղանին :

Կենդանիւս դու, Մուշեղ :

Արդարութիւն անմահ է .

Թող մեռցի նըղովիւք

Չար յիշատակ Սահառուներն :

Միհրդատ Պարթեւեան Աշտ
Կերտ, Ժ. Վ. Վարադդատ :

ԱՆՁՆԱՆՈՒՆԷՐ

ԳՈՐԾԱԿԱԼՔ ԸՆԿԵՐԱԳՐՈՒԹԵԱՆ .

ՎԱՆ . Պ . Մկրտիչ Տ . Ատոմեան :

ԲԱՂԷՇ . Պ . Տիգրան Կալփաղ չեան Պօլսեցի :

ԲԵՐԻԱ . Յովհաննէս Աղա Բուքքլիխանլեանց :

ՄՈՒՇ . Աղա Վարդան Մամիկոնեան :

ՍԱՐԻՆ . Խաչատուր Խան Տ . Ներսիսեանց :

ՏՐԱՊԷՉՈՆ . Պ . Ստեփան Մ . Յակովբեանց :

ՊՕԼԻՍ . Ղեւոնդ վարդապետ միաբան Վարդայ :

ՏՓԽԻ Ս . Պ . Համբարձում Էնֆրաճեանց հրատարակիչ Սը-
ռունի Հայոց աշխարհի պատուական ամսագրոյն . Եւ Պ .
Գարեգին Մուրաթեանց :

ԳԱՆՁԱԿ . Պ . Ներսէս Աբրահամեանի :

ՂԱՐԱԲԱՂ . Ընթերցասիրաց Թանգարան :

ԱՂԵՔՍԱՆԴՐՊՕԼ . Խիմէոն Սարկաւազ Օրէնսուսոյց
Սարքունի ուսումնարանին :

ՆՈՐ ՊԱՅԱԶԻՏ . Աղա Բարսէղ Արծրունեաց :

ԵՐԵՒԱՆ . Պ . Զաքար Տ . Յոհաննէսեան :

ՆԱԽԶՈՒԱՆ . Մ . Մկրտիչ Թունեան :

ՎԵՐԻՆ ԱԳՈՒԼԻՍ . Պ . Գասպար Ասլանեանց :

ՆԵՐՔԻՆ . — ուսումնասէր Տ . Յակոբ քահանայ Տ .
Անդրէասեանց :

ԴԱԻՐԷԺ . Մատթէոս Նազարեանց եւ Յոհաննէս Շխեանց

Ղարաբաղցի վաճառական ուսումնասէր Պաբոնայք :

ՍԱԼԱՄԱՍՏ . Աղա Պատալ Արշունեան :

ԲՈՎԱՆՆԴԱԿՈՒԹԻՒՆ ՆՈՒԹՈՑ :

Ազգային երկպառակութիւն :	97
Զոգք Երեմիայի վերածեալ ի Հայաստան :	109
Տփխիս քաղաք (Շրուհուհուհու 87)	116
Արամ ի ճակատ մարտին :	125
Ռդերբգութիւն ի քաջակորովն Մուշեղ Մամիկոնեան :	127

ԳԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԸՆԿԵՐԱԴՐՈՒԹԵԱՆ ՎԱՆԻԿ

Ի վան, 'ի Բաղէշ, 'ի Սուշ, 'ի Վարէն, երկուսն իւր Օսմանի խան շուրուշեայ արծաթ Մեծիպիէ :

Իսկ Պալէս է՝ Տաճկաստանի ուրիշ խաչմերձէր երես արծաթ խան շուրուշեայ Մեծիպիէ :

Ի Բուսաստան է՝ 'ի Պարսկաստան չորս արծաթ Մանէլ :

Ճանապարհին ծախս խաչմերձի պիտի լինի :